

Թիւ 27714
Մարտ 31, 1982

Մեծայարգ
Տիար Արա Տոսթուրեան
Աթլանթա.

Յարգելի Տիար Տոսթուրեան,

Ժամանակին ստացած ենք ձեր նամակը եւ ներփակեալ գրութիւնը:

Ուրախ ենք որ Աթլանթա բնակող հայերը սկսած են կազմակերպուիլ:
Յաջողութիւն կը մաղթենք ձեր կատարած օգտակար աշխատանքներուն:

Եթէ կը կարծէք որ Առաջնորդարանը որեւէ ձեւով կրնայ օգտակար
ըլլալ ձեզի՝ ազատ զգացէք իմացնելու մեզի: Ինչպէս օրինակ, ձեր
Հայերէն դասերուն համար եթէ Հայերէն լեզուի դասագիրքերու կամ
այլ նիւթերու պէտք ունիք, գրեցէք: Առաջնորդարանի Հայ Դպրոցներու
կրթական Բաժանմունքը այդ կապակցութեամբ բազմաթիւ նիւթեր ունի:
Ձեզի կը դրկենք բաժանմունքի ``գաթալուկը``:

Ընորհակալ պիտի ըլլանք եթէ առաջին առիթով մեզի յղէք նորակազմ
միութեան կանոնադրութեան օրինակը:

Ձեզի եւ ձեր սրաշաօնակիցներուն կը մաղթենք յարատեւութիւն եւ
յաջողութիւն: Հայապահպանման գործը իւրաքանչիւր հայու առաջնահերթ
պարտականութիւնը պէտք է ըլլայ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ